Ազգ
Azg armenian daily
9 ՀՈՒԼԻՍ 2003 ՉՈՐԵՔՇԱԲԹԻ 129 (2814)

# Հայկական շուկայում իրացվող մթերքների 60%-ից ավելին վտանգավոր է առողջության համար

ԵՐԵՎԱՆ, 8 ՀՈՒԼԻՍ, ՆՈՅՅԱՆ ՏԱՊԱՆ: Հայկական շուկայում իրացվող ապրանքների մոտ 90%-ը չունի համապատասխանության հավաստագիր, իսկ մթերքների 60%-ից ավելին ժամկետանց է եւ սպառնալիք է ներկայացնում առողջության համար: Այս տվյալները ներկայացված են Սպառողների իրավունքների պաշտպանության հայկական միության կողմից անդրսահմանային դրամաշնորհային ծրագրի շրջանակում, որն իրականացնում է Տարածաշրջանային էկոլոգիական կենտրոնը Կովկասի համար Շվեյցարիայի կառավարության աջակցությամբ:

Ըստ միության նախագահ Աբգար Եղոյանի, համապատասխանության հավաստագրերի բացակայությունը ստվերային տնտեսության նշան է: Ըստ նրա, եթե բոլոր ներկրվող եւ երկրում արտադրվող ապրանքները օժտված լինեն տվյալ հավաստագրով, ապա դրանց վաճառքից հարկերը եռակի կմեծանան:

ՍԱՀՄԱՆ

## Սերժ Սարգսյանն ու Սաֆար Աբիեւը Իջեւանի մոտ քննարկեցին հրադադարի պահպանման հարցը

Երեկ հայ-ադրբեջանական սահմանային գոտում, Իջեւանի հարեւանությամբ, հանդիպում են ունեցել Հայաստանի եւ Ադրբեջանի պաշտպանության նախարարները: Ինչպես հաղորդում է Արմենպրես գործակալությունը, Սերժ Սարգսյանն ու Սաֆար Աբիեւը քննարկել են հրադադարի ռեժիմի պահպանման ու սահմանային միջադեպերը բացառելու հետ կապված հարցերը:

Թեեւ գործակալությունը հավելյալ մանրամասներ չի հայտնում հանդիպման մասին, սակայն արժե հիշեցնել, որ վերջին 10 օրերի ընթացքում սահմանային բնույթի բախումների ու ներթափանցումների մասին լուրերն անպակաս էին ադրբեջանական մամուլում, ինչին երբեմն հերքմամբ էր պատասխանում հայկական կողմը: Երկու երկրների նախարարների հանդիպումը ապացուցում է, որ ադրբեջանական մամուլի տեղեկությունները բոլորովին անհիմն չէին: Դրանց հիմնավոր լինելը փաստում է նաեւ «Ազատ Արցախ» թերթը, որը տեղեկացնում է, որ հուլիսի 1-ին ԼՂՀ պաշտպանության նախարարությունը հանդես է եկել նախազգուշացմամբ, որ դեպի ղարաբաղյան բանակի առաջավոր գիծ դիրքերը տեղաշարժելու ադրբեջանական որեւէ փորձ խստորեն կկասեցվի: Հակառակ դրան, ավելացնում է թերթը, վերջին օրերին հակառակորդի զինված կազմավորումները կրկին նման գործողություններ են ձեռնարկել հարավ-արեւելյան ուղղությամբ, որոնց արժանի հակահարված են տվել ԼՂՀ պաշտպանության բանակի ստորաբաժանումները:

Հետեւաբար, տրամաբանական է, որ երկու նախարարների հանդիպումը միտված էր նմանատիպ դեպքերի ու լարվածության շիկացման առաջն առնելուն:

ՈՉ ՊԱՇՏՈՆԱԿԱՆ

## Նախագահը մեկնում է Ֆրանսիա

*Այցի մասին՝ ոչ մի մանրամասն*

Հուլիսի 15-ին հանրապետության նախագահ Ռոբերտ Քոչարյանը Ֆրանսիայի նախագահ Ժակ Շիրակի հրավերով աշխատանքային այցով կլինի Ֆրանսիայում: Միայն այսքանն օրեր առաջ լրագրողներին տեղեկացրեց ՀՀ նախագահի մամլո քարտուղար Աշոտ Քոչարյանը:

Թե ինչ ծրագրով է Ռոբերտ Քոչարյանը լինելու Ֆրանսիայում եւ որքան է տեւելու այցելությունը, Աշոտ Քոչարյանը մեր հարցին երեկ պատասխանեց, որ ժամկետները դեռ ճշտվում են: Ընդ որում, իր առաջին մամլո ասուլիսի ժամանակ հայտնած տեղեկություններից ավելին նախագահի մամլո քարտուղարը չհայտնեց, մինչդեռ որոշ լրատվամիջոցներ ժամկետի մասին արդեն իսկ որոշակի տեղեկություններ ունեն:

Մեր տեղեկություններով, Ռոբերտ Քոչարյանը հուլիսի 15-ին կլինի Ֆրանսիայում՝ 2-օրյա այցով: Բայց, մեր տվյալներով, այցելությունը կարող է երկարել: Իսկ թե ի՞նչ կքննարկեն նախագահները եւ ի՞նչ ծրագիր կլինի, մնում է անհայտ: Այդ այցելության առումով հետաքրքրական է, որ հենց հուլիսի 15-ին, ըստ ԻՏԱՌ-ՏԱՍՍ-ի, Ժակ Շիրակը մեկնելու է Փարիզից:

Ա. Հ.

## Երբ իրավախախտներն իրավապահներն են

ՀՀ ոստիկանության եւ դատախազության աշխատակիցները կոպիտ կերպով խախտում են ՀՀ սահմանադրությունը, մարդու իրավունքների եւ հիմնարար ազատությունների պաշտպանության կոնվենցիայի հոդվածները, ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի մի շարք հոդվածներ: Այս անգամ իրավապահ մարմինների աշխատակիցների թերացումների եւ օրինազանցությունների մասին ահազանգ են հնչեցնում փաստաբաններ Ռուբեն եւ Նարինե Ռշտունիները: Թեեւ հրավիրված մամլո ասուլիսի թեման մի քանի կոնկրետ քրեական գործեր էին, Ռուբեն Ռշտունին նշում է, որ յուրաքանչյուր գործ, որով իրենք զբաղվում են, մամուլի ասուլիսի առարկա կարող է լինել: «Գրեթե չի լինում քրեական գործ, որն առանց օրինախախտումների անցնի», ավելացնում է Նարինե Ռշտունին, մանավանդ երբ գործը լայն հնչեղություն է ստանում:

Օրինակը, որ նշում են Ռշտունիները, վերաբերում է հունիսի 25-ին Նուբարաշենում տեղի ունեցած սպանություններին (նրանք քրեական գործով կասկածյալներ Վաչագան Մանուկյանի եւ Դավիթ Մկրտչյանի պաշտպաններն են): Բողոքն ուղղված է ՀՀ ոստիկանության Երեւան քաղաքի վարչության եւ Աջափնյակ ու Դավիթաշեն համայնքների դատախազության աշխատակիցների ապօրինի գործողությունների դեմ: Նշված կառույցների աշխատակիցները 2003 թ. հուլիսի 2-ին, առանց որեւէ իրավական հիմքի, քաղաքացիական զգեստով, ներխուժել են Սամվել Գեւորգյանի տան բակը եւ կրակոցներ արձակելով ոստիկանության բաժին բերման ենթարկել Ռշտունիների պաշտպանյալներին՝ մինչ այդ տան դուռը բացելու պահանջ եւ չբացելու դեպքում դուռը ջարդելու սպառնալիքներ հնչեցնելով: Այնուհետեւ Վաչագան Մանուկյանը եւ Դավիթ Մկրտչյանը մոտ 20 ժամ ապօրինի զրկվել են ազատությունից՝ լինելով փաստացի ձերբակալվածների կարգավիճակում: Չի արձանագրվել նրանց՝ անազատության մեջ գտնվելու փաստը, փաստաբաններին չի թույլատրվել մասնակցել քննչական գործողություններին:

Տես էջ 2

## Ամենայն հայոց կաթողիկոսը կարճատեւ այց կատարեց Արցախ



ՍՏԵՓԱՆԱԿԵՐՏ, 8 ՀՈՒԼԻՍ, ՆՈՅՅԱՆ ՏԱՊԱՆ: Հուլիսի 8-ին հովվապետական կարճատեւ այցով Արցախում էր Գարեգին Բ Ամենայն հայոց կաթողիկոսը: Այցելության նպատակն էր որոշել Ստեփանակերտում կառուցվելիք եկեղեցու տեղը: Վեհափառի խոսքերով, եկեղեցին կկառուցվի ԼՂՀ մայրաքաղաքի կենտրոնական թաղամասերից մեկում, իսկ շինարարական աշխատանքները կավարտվեն 2 տարվա ընթացքում:

Վեհափառ հայրապետն այցելեց նաեւ Ստեփանակերտի հարավային մասում բարերար Լուիզ-Սիմոն Մանուկյանի հովանավորությամբ կառուցվող բարձրահարկ բնակելի շենք՝ ծանոթանալու շինարարական աշխատանքների ընթացքին:

Շրջայցի ընթացքում Ամենայն հայոց կաթողիկոսին ուղեկցում էին ԼՂՀ նախագահ Արկադի Ղուկասյանը, վարչապետ Անուշավան Դանիելյանը եւ պաշտոնատար այլ անձինք:

ՀԱՄԱՌՈՏ

## Հակահայկական կոչեր Տյումենի մարզի Իշիմ քաղաքում

ԿՐԱՍՆՈԴԱՐ, 8 ՀՈՒԼԻՍ, ՆՈՅՅԱՆ ՏԱՊԱՆ: Տյումենի մարզի Իշիմ քաղաքի տների պատերին եւ կենտրոնական փողոցի մայթերին հայտնվել են տեղի հայ համայնքի ներկայացուցիչներին հասցեագրված վիրավորական արտահայտություններ պարունակող գրություններ: Ինչպես գրում է Ռուսաստանի հարավի հայերի «Երկրամաս» թերթը, Իշիմի իրավապահ մարմինների ներկայացուցիչները գտնում են, որ դա կարող է ազգամիջյան թշնամանքի բորբոքման առիթ դառնալ: Քաղաքի դատախազության կարծիքով, «գրությունները, ավելի շուտ, շարունակությունն են հունիսի 16-ին տեղացի եւ հայ երիտասարդների խմբերի միջեւ տեղ գտած կոնֆլիկտի»:

Ծայրահեղական բովանդակության գրությունների հայտնվելու փաստի առթիվ հարուցվել է քրեական գործ ՌԴ քրեական օրենսգրքի վանդալիզմի եւ ազգային, ռասայական ու կրոնական թշնամանք բորբոքելու հոդվածներով: Աշխատում է հատուկ կազմավորված օպերատիվ-քննչական խումբ՝ քաղաքային դատախազի հսկողությամբ:

## Պուտինին այսօր սպասում են Բաքվում

ԲԱՔՈՒ, 8 ՀՈՒԼԻՍ, ՆՈՅՅԱՆ ՏԱՊԱՆ: Ռուսաստանի նախագահ Պուտինի չծրագրված այցը Ադրբեջան սպասվում է հուլիսի 9-10-ը: Նախագահներ Պուտինի եւ Ալիեւի հանդիպումը ենթադրում է մտքերի փոխանակություն միջպետական հարաբերությունների հարցերի շուրջ: Սակայն, ինչպես գրում է Բաքվի «525» թերթը, նախագահական ընտրությունների նախօրյակին, որ Ադրբեջանում նախատեսված են հոկտեմբերի 15-ին, այցի նպատակը ակնհայտ է: Թերթը հիշեցնում է, որ այժմ հանրապետությունում ընտրարշավը իր բարձրակետին է: Ադրբեջանի նախագահի պաշտոնին հավակնում է 12 մարդ, այդ թվում գործող նախագահ ութսունամյա Հեյդար Ալիեւը, որն առաջադրվում է «Ենի Ազերբայջան» կուսակցությունից, եւ իր որդի Իլհամ Ալիեւը Ադրբեջանի Նախիջեւանի ինքնավար Հանրապետությունից:

## Իրանցի երկվորյակ քույրերի մահը խոր հուզում պատճառեց բոլորին



29 տարի սիամական միության մեջ ապրելուց հետո նրանք՝ Լադան եւ Լալեհ Բիժանի քույրերը, խիզախ որոշում էին կայացրել միմյանցից անջատվելու, իրենց ուրույն կյանքով ապրելու: Լադանն ուզում էր իրավաբան դառնալ, իսկ Լալեհը որոշել էր Թեհրան մեկնել եւ լրագրությամբ զբաղվել: Եվ ամբողջ աշխարհը, հեռուստատեսությամբ տեսնելով երկվորյակ սիամական քույրերի շպարված դեմքերը, ժպիտը, մարդամոտությունը, գորովով էր լցվել համակրելի զույգի նկատմամբ եւ սպասում էր Սինգապուրի «Ռաֆլզ» կլինիկայում նրանց բարեհաջող վիրահատությանը:

Մի քանի տարի առաջ քույրերը որոշել էին վիրահատվել Գերմանիայում, որտեղ բժիշկները մերժել էին հանձն առնել մեծ ռիսկ պահանջող վիրահատությունը: Մոտավորապես 1 տարի առաջ քույրերը Իրանից ժամանել էին Սինգապուր, որտեղ նյարդավիրաբույժներին մինչ այդ հաջողվել էր անջատել գլուխներով իրար միացած նեպալցի երկվորյակ աղջիկներին: Հակառակ ակնկալվող բարդություններին, «Ռաֆլզի» բժիշկները որոշել էին դիմել ռիսկի, մանավանդ որ մեծ էր երկվորյակների ցանկությունը: Լադանն ու Լալեհը ճիշտ է, որ առանձին ուղեղներ ունեին, սակայն ուղեղը սնուցող արյունատար անոթն ընդհանուր էր: Անհրաժեշտ էր ստեղծել 2-րդ անոթը: Դա կարող էր լինել Լադանի աջ ազդրից հանված ենթամաշկային երակի հատվածը: Սակայն կիրակի օրը սկսված վիրահատության 20-րդ ժամում, երակի պատվաստման ժամանակ, խախտվել էր արյան շրջանառությունը Լադանի մարմնում եւ բարձրացել ներգանգային ճնշումը: Հենց այդ պահին սկսվել էր պայքարը կյանքի ու մահվան միջեւ: Մինչ 28 բժիշկներն ու 100 օգնական բուժաշխատողները կենտրոնացել էին միլիմետր-միլիմետր ուղեղի հյուսվածքներն անջատելու վրա, սոսկալի արյունահոսությունը սկսել էր հանգցնել Լադանի կյանքի լույսը: Քրոջ մահվանից մի քանի ժամ հետո, նմանապես արյան կորուստի պատճառով, մահացավ նաեւ Լալեհը, կարծես արդարացնելու համար այն, որ նրանց կյանքը ճակատագրականորեն կապված էր միմյանց, նրանցից որեւէ մեկը չէր կարող առանձին գոյատեւել:

Եվ այժմ ամբողջ աշխարհը սգում է քույրերի մահը եւ ցավում բժիշկների կողմից «Հույս» անվանված գործողության անհույս ավարտը:

